Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Արարատի մարզի Մարմարաշենի Անդրանիկ Բարությանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ- ում <<Տեխնոլոգիա >> /4 դ/ժամ/ առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի թափուր տեղի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անվկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
1. Դիմում /Ձև 1/,
2. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
3. Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ /դիպլոմ/ , միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ,
4. Անձը հաստատող փաստաթուղթ,
5. << Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,
6. Ինքնակենսագրություն /Ձև 5/,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/
10. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N596 որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն /մասնակցած լինելու դեպքում/: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել համալրել դրանք:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են 2025թ-ի հոկտեմբերի 29-ից մինչև 2025թ-ի նոյեմբերի 11-ը ներառյալ ամեն օր ժամը 9^{00}-ից 15^{00}-ը , բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
Մրցույթը տեղի կունենա՝ 2025թ-ի նոյեմբերի 17-ին , ժամը 15^{00}-ին , Արարատի մարզի Մարմարաշենի Ա. Բարությանի անվան միջն. դպրոցում:
Հասցեն՝ Համայնք Մարմարաշեն ,Երևան- Արտաշատ խճուղի 71:
Տեղեկությունների համար զանգահարել 093-97-64-80 հեռախոսահամարով: